

[1] Դուրս գրման ամսաթիվ		
25	Նոյեմբեր	2019 թ.
[4] Մատուցման ամսաթիվը		
25	Նոյեմբեր	2019 թ.

**Հաշիվ վավերագիր**  
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[2] Մերիա	[3] Համար
Բ	4462859969
Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Մերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
------------	--------------------	-----------

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
[7.1] ՀԴՄ կտրոնի համար

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	4	3	8	4	6
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՊՈՒԻԳԼՈՏՆԵԲ» Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ			N 1150003694504546				
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻՆՅԱՆ Փ. 11 83 տ.							
[13] Լրացուցիչ տվյալներ	Ծառայությունների մատուցման վայրը ( հասցեն ) ՀՀ ք. Երևան, Կիկյան փ. 11 83տ.							

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834				
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար	Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 58217015 քրեական գործի թարգմանություն, հունգարերեն-հայերեն	էջ	33	24000		792000
2	Թիվ 58200513 քրեական գործի թարգմանություն, հոլանդերեն-հայերեն	էջ	91	10000		910000
3	Թիվ 58207816 քրեական գործի թարգմանություն, իտալերեն-հայերեն	էջ	3	5500		16500
4	Թիվ 58210617 քրեական գործի թարգմանություն, հոլանդերեն-հայերեն	էջ	7	10000		70000
5	Թիվ 41107615 քրեական գործի թարգմանություն, հոլանդերեն-հայերեն	էջ	8	10000		80000
6	Թիվ 58163618 քրեական գործի թարգմանություն, իսպաներեն-հայերեն	էջ	3	5400		16200
7	Թիվ 13166817 քրեական գործի թարգմանություն, հունգարերեն-հայերեն	էջ	2	24000		48000
8	Թիվ 14862418 քրեական գործի թարգմանություն, լիտվերեն-հայերեն	էջ	4	20000		80000
9	Թիվ 58163118 քրեական գործի թարգմանություն, լեհերեն-հայերեն	էջ	6	5950		35700

10	Թիվ 15889318 քրեական գործի թարգմանություն, հայերեն-այարսկերեն	էջ	11	3400		37400
11	Թիվ 58153819 քրեական գործի թարգմանություն, գերմաներեն-հայերեն	էջ	2	4400		8800
12	Թիվ 58160817 քրեական գործի թարգմանություն, գերմաներեն-հայերեն	էջ	85	4400		374000
13	Թիվ 15885419 քրեական գործի թարգմանություն, գերմաներեն-հայերեն	էջ	12	4400		52800
14	Թիվ 15871418 քրեական գործի թարգմանություն, հայերեն-արաբերեն	էջ	19	5500		104500
15	Թիվ 58159917 քրեական գործի թարգմանություն, հունգարերեն-հայերեն	էջ	8	24000		192000
<b>Ընդամենը</b>						<b>2817900</b>

Օտարություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

OHANYAN INNA 5401570325



(ստորագրությունը, անունը, ազգանունը)

25/11/2019 11:10:23

Օտարություն  
(աշխատանք)  
ստացող



(ստորագրությունը, անունը, ազգանունը)

**ՈՐՈՇՈՒՄ**  
**Թարգմանիչ հրավիրելու մասին**

13 հուլիսի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Շ.Նազարյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 58217015 քրեական գործի նյութերը.

**ՊԱՐԶԵՑԻ՝**

Անհայտ անձը 2015թ. օգոստոսի 19-ից հոկտեմբերի 13-ն ընկած ժամանակահատվածում չպարզված եղանակով հասանելիություն է ստացել «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲ ընկերության հաճախորդ Դանիել Հիլերի էլ. փոստին և վերջինիս անունից նամակներ ուղարկելով Բանկի ծառայողական էլ. փոստերին՝ Դանիել Հիլերի հաշվից դրամական փոխանցումներ կատարելու վերաբերյալ հանձնարարականներ է տվել Բանկին, որի արդյունքում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակվել է հիշյալ հանձնարարականների հիման վրա Բանկի կողմից փոխանցված, առանձնապես խոշոր չափերի՝ 112.665.864 ՀՀ դրամին համարժեք 234.665 ԱՄՆ դոլար գումարը:

Դեպքի առթիվ 2015թ. նոյեմբերի 30-ին ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58217015 քրեական գործը, որի նախաքննությունը կատարվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Նախաքննության ընթացքում իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Հունգարիայի Հանրապետության իրավասու մարմնին, որի շրջանակներում ստացվել են հունգարերեն լեզվով փաստաթղթեր, որոնք ենթակա են թարգմանության:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանը տիրապետում է հունգարերեն լեզվին և ունի թարգմանչի որակավորում, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

**ՈՐՈՇԵՑԻ**

Թիվ 58217015 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանին /ծնված՝ 20.08.1983թ., անձնագիր՝ 799493, տրված՝ 20.03.2007թ., դիպլոմ թիվ 263100122382, տրված 06.08.2018թ./, նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


Պետի տեղակալ՝



Շ.Նազարյան

Ծանոթացա սույն որոշմանը: Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս.Սարգսյան

Որոշում  
թարգմանիչ հրավիրելու մասին

03.07.2019թ.

ք. Երևան

«Ճ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հարկապահ կարևոր գործերի քննության վարչության ՀԿԳ քննիչ Գ.Հ.Ավետիսյանս, ուսումնասիրելով թիվ 58200513 քրեական գործի նյութերը:

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Ճիրակի մարզի քնակիչներ՝ Էդգար Խարայեյանը, Արտյոմ Կազոյանը, Արկաղի Խաչատրյանը և Եղիշե Խաչատրյանը, դեռևս 2001թ. ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հարկանիշներով հետախուզման մեջ գտնվելով, ՀՀ ոստիկանության ՔԳՎ Ճիրակի մարզի քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում, 2007թ. փարբեր ժամանակահատվածներում իրենց լիազոր փարբեր անձանց միջոցով փարածքային զինկոմիսարիաք են ներկայացրել ՌԴ ծննդյան և ամուսնության կեղծ վկայականներ՝ ՌԴ-ում իբր ամուսնանալու և համարեղ կյանքի ընթացքում երեք երեխա ունենալու վերաբերյալ: Ներկայացված կեղծ փաստաթղթերի հիման վրա, ՀՀ ՊՆ միջգերատեսչական հանձնաժողովը վերը նշված անձանց փրամադրել է պարտադիր զինվորական ծառայությունից փարեկեքում կամ կարարել զինհաշվառում (կախված նրանց փարիքից), նրանց կողմից կարարվել են համապարասխան պեքրական մուծումներ, որից հեքո միջգերատեսչական հանձնաժողովի որոշումն ուղարկվել է համապարասխան քննչական բաժին և այդ անձանց վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով քննվող քրեական գործերով 2007թ. որոշում է կայացվել դրանց վարույթը կարճելու մասին:

ՀՀ ԿԱ ԱԱԾ օպերատիվ սրորարածանումները ՌԴ համապարասխան մարմիններին հարցումներ են կարարել, որոնցով հիմնավորվել է, որ վերը նշված անձանց կողմից զինկոմիսարիաքներին ներկայացված ծննդյան և ամուսնության վկայականները կեղծ են, որոնց կապակցությամբ վերցվել են համապարասխան փեղեկանքներ:

22.01.2013թ-ին ազգային անվանագության ծառայության քննչական վարչությունում հակահետախուզության գլխավոր վարչությունից սրացված նյութերի հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 325 րդ հոդվածի 2-րդ մասի հարկանիշներով հարուցվել է քրեական գործ:

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում կարարված նախաքննության ընթացքում ՀՀ ՊՆ կենքրոնական զինկոմիսարիաք ուղարկված հարցման արդյունքում պարզվել է, որ 2009թ. մինչև 2012թ. ընկած ժամանակահատվածում 488 քաղաքացիներ նույն եղանակով, այսինքն՝ ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականներ ներկայացնելով, ազարվել են պարտադիր զինվորական ծառայությունից, սրացել փարեկեքումներ, իսկ 2009թ. առաջ, նույն եղանակով պարտադիր զինվորական ծառայությունից ազարված քաղաքացիների վերաբերյալ ողջ փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարի համապարասխան հրամանով, ոչնչացվել են:

Կարարված հարցումներով պարզվել է, որ 488 քաղաքացիներից 364-ի գործերում առկա են ՌԴ նմուշի ամուսնության, ծննդյան և հայրության ճանաչման վկայականներ, իսկ մնացած քաղաքացիների նմանարիպ փաստաթղթերն արարասահմանյան մի շարք այլ երկրների նմուշի են:

22.07.2015թ. -ին որոշումներ են կայացվել՝ Հմայակ Գուրգենի Դավթյանի և Գնունիկ Պեքրոսի Պեքրոսյանի նկարմամբ քրեական հետապնդում Ճիրականացնելու մասին՝ ՀՀ քրեական դարավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կեքրով՝ վաղեմության ժամկեքներն անցնելու հիմքով:

23.07.2015 թվականին թիվ 58200513 քրեական գործը կասեցվել է ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կեքրի հարկանիշներով՝ հայտնի չլ անձը, որը գործով պեքր է ներգրավվի որպես մեղադրյալ:

26.04.2016թ. ՀՀ ԿԱ ԱԱԾ ռազմական հակահետախուզության գլխավոր վարչությունի սրացվել է թիվ 4/135 գրությունը, համաձայն որի՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչություն քննվող թիվ 58200513 քրեական գործի շրջանակներում իրականացված օպերատիվ-հետախուզակալ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**  
**Թարգմանիչ ներգրավելու մասին**

08-ը հուլիսի 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Հ.Հ.Չալաբյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 58207816 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող թիվ 58207816 քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել կատարել թարգմանություններ իտալերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել կատարել թարգմանություններ իտալերեն լեզվով, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**


1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Քրիստինե Ժորայի Նարինյանին, ում պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝



Հ.Հ.ՉԱԼԱԲՅԱՆ

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են թարգմանիչ՝



(ստորագրություն, ազգանուն)

«    »    2019թ.

հոյ աճայ երթիմ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Քրեական գործով թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

10-ը հուլիսի 2019թ.

ք. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ա.Ա.Պետրոսյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 58210617 քրեական գործի նյութերը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝**

ՀՀ քաղաքացի Արմեն Խաչիկի Մելքոնյանը 2017 թվականի ապրիլի 23-ին «Հվարթնոց» օդանավակայանով թիվ 2900 չվերթով Բելգիայի Թագավորություն մեկնելու նպատակով «Հվարթնոց Հենդլինգ» ՓԲԸ ընկերության ուղևորների հաշվառման ծառայությանը ներկայացրել է իր՝ ՀՀ քաղաքացու AR 0227792 սերիա-համարի անձնագիրը և դեռևս չպարզված հանգամանքներում կեղծված՝ Բուլղարիայի Հանրապետության քաղաքացու թիվ 616430961 նույնականացման քարտը որպես վերոհիշյալ չվերթի ուղևոր հաշվառելու հիմք: Այնուհետև հատելով ՀՀ պահպանվող պետական սահմանը՝ մեկնել է Բելգիա, սակայն նույն օրը Բելգիայի իրավասու մարմինների կողմից բացահայտվել է Արմեն Մելիքյանի կենսորոշիչ տվյալներով Բուլղարիայի հանրապետության քաղաքացու թիվ 616430961 նույնականացման քարտի կեղծ լինելու հանգամանքը, ինչի արդյունքում վերջինս 29.04.2017 թվականին արտաքսվել է ՀՀ:

Դեպքի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում 2017 թվականի հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58210617 քրեական գործն, որը ըստ քննչական ենթակայության ուղարկվել է Մասիսի քննչական բաժին:

Մասիսի քննչական բաժնի պետի կողմից քրեական գործով նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

2019 թվականի հունիսի 11-ին ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է Բուլղարիայի Հանրապետության իրավասու մարմնին ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ ստացված նյութերը և անհրաժեշտություն է առաջացել նշված նյութերը թարգմանել հոլանդերենից հայերեն լեզվով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավորության օրենսգրքի 15-րդ, 83-րդ և 55-րդ հոդվածներով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Թիվ 58210617 քրեական գործով հոլանդերենից հայերեն թարգմանություն իրականացնելու համար որպես թարգմանիչ ճանաչել Սամվել Վաչագանի Ղոթայանին/ անձնագիր՝ AK 0434802/:
2. Սամվել Ղոթայանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ա. Ա. Պետրոսյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
թարգմանիչ հրավիրելու մասին

12.09.2019թ.

ք.Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Նարինե Հովհաննիսյանս, քննարկելով վարույթիս թիվ 41107615 քրեական գործի նյութերը՝ հարուցված ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով,

պ ա ր գ ե ց ի՝

Հայկ Կարոյի Անդրյանն ավտոմեքենա գնելու նպատակով 2015թ. ապրիլին [www.auto.am](http://www.auto.am) ինտերնետային կայքի միջոցով կապ է հաստատել Մեծ Բրիտանիայի թագավորության քաղաքացի Լավլ Պավելի հետ, ում պահանջով 2015թ. մայիսի 13-ին, «Կոնվերս Բանկ» ՓԲ ընկերության Կապան մասնաճյուղից 2.412.500 ՀՀ դրամին համարժեք 5.000 ԱՄՆ դոլար է ուղարկել GST CAPANU ընկերությանը՝ 5-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում «Նիսան Իքստրայլ» մակնիշի ավտոմեքենան Լոնդոնից Հայաստանի Հանրապետություն ուղարկելու պայմանով: GST CAPANU ընկերության պահանջով, 2015թ. մայիսի 19-ին, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Կապան մասնաճյուղից նույն ընկերությանն է ուղարկել ևս 965.000 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլար՝ Վրաստանի Հանրապետությունում ավտոմեքենայի հետ կապված ֆինանսական ծախսերը լուծելու նպատակով: 2015թ. մայիսի 21-ին, GST CAPANU ընկերությունը Հայկ Անդրյանից պահանջել է ևս 2490 ԱՄՆ դոլար՝ ՀՀ մաքսատան վճարումները կատարելու համար, ինչից Հայկ Անդրյանը հասկացել է, որ չարաշահել են իր վստահությունը, հափշտակել առանձնապես խոշոր չափերով՝ 3.377.500 ՀՀ դրամին համարժեք 7.000 ԱՄՆ դոլար գումար:

Դեպքի առթիվ 2015թ. հունիսի 17-ին Սյունիքի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 41107615 քրեական գործը:

Միջազգային քննչական հանձնարարության կատարման շրջանակներում ստացվել են հովանդերենով կազմված փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունն իրականացվում է հայերենով, հետևաբար անհրաժեշտ է թարգմանչի օգնությամբ քրեական գործի փաստաթղթերը թարգմանել:

Ելնելով վերոգրյալից և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

ո Ր Ո 2 Ե 9 Ի՝

Թիվ 41107615 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Սամվել Վաչագանի Ղոթայանին (ծնվ. 15.01.1958թ. Երևան քաղաքում) ազատորեն տիրապետում է հայերեն ու հոլանդերեն լեզուներին, և գործով չչահագրգռված անձի է:

ՀԿԳ ավագ քննիչ

Ն.Ա. Հովհաննիսյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է « 09.2019թ.: Ես նախագգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ

Ս. Ղոթայան

ՀԿԳ ավագ քննիչ

Ն. Հովհաննիսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ ներգրավելու մասին**

10 սեպտեմբերի 2019թ.  
ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Գ.Ա.Օհանյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58163618 քրեական գործի նյութերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2018 թվականի հոկտեմբերի 17-ին «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ հիմնադիր-տնօրեն Արթուր Էմիկի Սարգսյանը հաղորդում է տվել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում այն մասին, որ սույն թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 07-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը չպարզված եղանակով հասանելիություն է ստացել «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ և թուրքական «Hayat Kimya» ընկերության էլեկտրոնային փոստերի բովանդակությանը և միջամտելով գործարար նամակագրությանը՝ վերջինիս անունից ներկայացրել է բանկային այլ հաշվեհամար, ինչից հետո հափշտակել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ կողմից սույն թվականի սեպտեմբերի 27-ին փոխանցված առանձնապես խոշոր չափերի՝ 9.645.000 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլար գումարը:

Փաստի առթիվ 2018թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58163618 քրեական գործը:

2018 թվականի նոյեմբերի 05-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել իսպաներեն լեզվով փաստաթղթերի հայերեն թարգմանություն:

Նկատի ունենալով, որ հիշյալ փաստաթղթերն իսպաներեն լեզվով թարգմանելու համար անհրեժեշտ է իսպաներեն լեզվի գիտելիքներ, ուստի ղեկավարվելով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածների պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Սույն քրեական գործով որպես թարգման ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության իսպաներեն լեզվի թարգմանիչ Աննա Հովհաննիսյանին (ծնված՝

«31» հուլիսի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13166817 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի


ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչությունում քննվում է ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված թիվ 13166817 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից «Սերվա Պլյուս» ՍՊ ընկերությունից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ խոշոր չափերով հափշտակություն կատարելու դեպքի վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել կատարել հունգարերենից ռուսերեն գրավոր թարգմանություններ, և, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանն ազատորեն տիրապետում է հունգարերեն և ռուսերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ ու կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 13166817 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Սիրանուշ Լևոնի Սարգսյանին /ծնված՝ 20.08.1983թ., ՌԴ քաղաքացի, անձնագիր՝ 60 06 799493/ և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝



Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս.Սարգսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

«29» օգոստոսի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրքեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 14862418 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**


ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրքեռհանցագործությունների քննության վարչությունում քննվում է ՀՀ քրեական 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 22.08.2018թ.-ին հարուցված թիվ 14862418 քրեական գործը, որի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել գրավոր թարգմանություն ռուսերեն լեզվից՝ հայերեն:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Սյուզաննա Ֆրունզիկի խալաթյանն ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ ու կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Թիվ 14862418 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Սյուզաննա Ֆրունզիկի խալաթյանին /ծնված՝ 20.01.1988թ., ՀՀ քաղաքացի, անձնագիր՝ AN0318564/ և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:


ՀԿԳ ավագ քննիչ՝



Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս.Խալաթյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

«29» օգոստոսի 2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրժեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 14862418 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրժեռհանցագործությունների քննության վարչությունում քննվում է ՀՀ քրեական 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 22.08.2018թ.-ին հարուցված թիվ 14862418 քրեական գործը, որի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել գրավոր թարգմանություն լիտվերեն լեզվից՝ հայերեն:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Սիրանուշ Լևոնի Սարգսյանն ազատորեն տիրապետում է լիտվերեն և հայերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ ու կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Թիվ 14862418 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Սիրանուշ Լևոնի Սարգսյանին /ծնված՝ 20.08.1983թ., ՌԴ քաղաքացի, անձնագիր՝ 60 06 799493/ և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝



Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս.Սարգսյան

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

«17» սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ս.Գրիգորյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58163118 քրեական գործի նյութերը,

ՊԱՐՁԵՑԻ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Նաիրա Դավթի Հարությունյանը հաղորդում է տվել, որ անհայտ անձը, չպարզված եղանակով 2018 թվականի հոկտեմբերի 2-ին ապօրինի կերպով տիրացել է «Facebook» սոցիալական ցանցի իր կողմից ստեղծված և իր անունն՝ Արթուր Սաշայի Սարգսյանի կողմից տնօրինվող ու իրենց անձնական էջերին կապակցված «English Zone in Yerevan» անվանումով աշխատանքային էջին ու փոփոխելով տվյալները՝ իրենց գրկել է այն օգտագործելու հնարավորությունից և այժմ ետ վերադարձնելու համար պահանջում է իր տրամադրած հաշվեհամարին փոխանցել 10 ԱՄՆ դոլար գումար:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ն.Հարությունյանը տված բացատրությամբ պնդել է վերոգրյալը, իսկ վերջինիս անուսինը՝ Ա.Սարգսյանը, տված բացատրությամբ հայտնել է, որ «Facebook» սոցիալական ցանցի իր անհատական էջը ուսումնասիրելուց հետո պարզել է, որ իր անունից 2018 թվականի հոկտեմբերի 7-ին «indz petqa esinch bany//Ինձ պետքա էսինչ բանը» խմբում կատարվել է հրապարակում՝ «Ինչպե՞ս տեսնել, թե ով է հյուր եկել Ձեզ Facebook-ում» վերտառությամբ, որը Ա.Սարգսյանը հայտնել է, որ ինքը չի կատարել:

Դեպքի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 17-ին Նաիրա Հարությունյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

2018 թվականի հոկտեմբերի 26-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Լեհաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին, որտեղից ստացված նյութերը պարունակում են փաստաթղթեր լեհերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումների կատարմամբ ստացված լեհերեն նյութերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Արուս Սամվելի Բաղինյանն ազատ տիրապետում է հայերեն և լեհերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58163118 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արուս Նամվելի Բաղինյանին:

2. Հրավիրվող թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, ինչպես նաև նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝



Ա.Գրիգորյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ա.Բաղինյան



« 24. 10. 2019 թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Թարգման ճանաչելու մասին

« 29 » օգոստոսի 2019 թ.

ք. Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ  
քննիչ Շ.Գրիգորյան, վերանայելով վարույթում գտնվող թիվ 15889318 քրեական  
գործի նյութերը

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

27.10.2018թ. ժամը 14.55-ին հաղորդում է տվել Ա.Բակլաջյանը, որ Լիստ.Էյեն կայքի միջոցով իր հետ ծանոթացած ոմն Սամվելը նույն օրը Երևան քաղաքի Իսահակյան 38 հասցեում գործող Գրին Բին սրճարանում իր երկու ոլորակիր համալարգիչները գնելու և գումարը քիչ անց վճարելու պատրվակով վերցրել է Դել մոդելի 750 ԱՄՆ դոլար արժողության և Մսի մոդելի 598.000 ՀՀ դրամ արժողության համալարգիչները, չի վճարել գումարը, խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով տիրացել է դրանց՝ պատճառելով խոշոր չափի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 28.10.2018թ. ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով թիվ 15889318 քրեական գործը հարուցելու մասին:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել պարզելու թարգմանել հայերեն տպագիր նյութեր, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել Պոլիգլոտներ ՍՊԸ-ի թարգմանիչ Կրիստինա Սուրենի Խանիկյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածներով

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթում գտնվող թիվ 15889318 քրեական գործով թարգմանիչ ճանաչել Պոլիգլոտներ ՍՊԸ-ի թարգմանիչ Կրիստինա Սուրենի Խանիկյանին:
2. Կրիստինա Խանիկյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Շ.Գրիգորյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Կ.Խանիկյան

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

«10» սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ քննիչ Ս.Գրիգորյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58153819 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի մարտի 12-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Վահե Վարուժանի Բաղդասարյանը հաղորդում է տվել, որ ս.թ. մարտի 12-ին «Իստեյտ մենեջմենթ ընդ ադմինիսթրեյշն քամփրնի» ՓԲ ընկերության համակարգչային համակարգերից մեկը վնասաբեր ծրագրերի օգտագործմամբ ենթարկվել է հարձակման, ինչի արդյունքում գաղտնագրման եղանակով խափանվել է հիշյալ ընկերության համակարգչային համակարգում առկա ողջ տեղեկատվությունը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Վահե Բաղդասարյանը տված բացատրությամբ պնդել է վերոգրյալը, իսկ ընկերության տեխնիկական աշխատակից Դավիթ Սամսոնի Շահնագարյանը իր բացատրությամբ հավելել է, որ իրեն չի հաջողվել վերականգնել սերվերային համակարգում այդ պահին գործող օպերացիոն համակարգի և ծրագրային ապահովման աշխատանքը: Դավիթ Շահնագարյանը նշել է նաև, որ վնասաբեր ծրագրի գործողության արդյունքում խափանումից հետո, սերվերի էկրանին հայտնվել է էլեկտրոնային փոստի 2 հասցեներ, որոնց միջոցով ինքը կապ է հաստատել օգտատիրոջ հետ, ով համակարգչային համակարգը ապագաղտնագրելու համար պահանջով է 700 ԱՄՆ դոլարին համարժեք բիթբրին տեսակի կրիպտոարժույթ:

Դեպքի առթիվ 2019 թվականի մարտի 15-ին Վահե Բաղդասարյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ:

2019 թվականի մարտի 25-ին քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել է վարույթ:

Քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասու մարմիններին, որտեղից ստացված նյութերը պարունակում են փաստաթղթեր գերմաներեն լեզվով:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցումների կատարմամբ ստացված գերմաներեն նյութերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ Անահիտ Գյուլգատյանն ազատ տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58153819 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Անահիտ Գյուլգառյանին:

2. Հրավիրվող թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, ինչպես նաև նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝

Ա.Գրիգորյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ա.Գյուլգառյան

« 11 » հոկտեմբերի 2019 թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**Թարգմանիչ հրավիրելու մասին**

24-ը հունիսի, 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Գ.Առաքելյանս, քննարկելով վարույթիս թիվ 58160817 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Հայաստանի Հանրապետության «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից՝ թռիչքների ապահովման մասնագետ Կարինե Սարգսյանը, 2017թ. հուլիսի 22-ի Երևան - Բադեն-Բադեն - Երևան ուղւթյամբ ARY4001/4001 հատուկ չվերթի սպասարկման աշխատանքները կազմակերպելու նպատակով 2017թ. հուլիսի 13-ին ops@air.am էլեկտրոնային փոստով կապ է հաստատել գերմանական «ACM Business Aviation Handling GmbH» ընկերության ներկայացուցչի հետ և ձեռք բերել պայմանավորվածություն, որի հիման վրա 2017թ. հուլիսի 14-ին «ACM Business Aviation Handling GmbH» ընկերության ներկայացուցչի info@acmhandling.de էլեկտրոնային փոստից ստացել է 17200,24 եվրո գումար կանխավճար կատարելու հաշիվ-ապրանքագիր: Նշված գումարի մեջ ներառվել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բադեն-Բադեն քաղաքի օդանավակայանի ծախսերը, վերգետնյա սպասարկումը, ինքնաթիռի նավթի լիցքավորման գումարը: Դրանից հետո 2017թ. հուլիսի 17-ին, գործով չպարզված անձը, հանդես գալով «ACM Business Aviation Handling GmbH» ընկերության ներկայացուցչի անունից, info@acmhandling-de.com էլեկտրոնային փոստից Կարինե Սարգսյանին ուղարկել է մեկ այլ հաշիվ-ապրանքագիր ու պահանջել 17200,24 եվրո գումար կանխավճարը կատարել տվյալ հաշիվ-ապրանքագրում նշված՝ «Bank Name: COMMERZBANK AG, BENEFICIARY: LODID GMBH, BANK ADDRESS: KAISERSTR.30,60311 FRANKFURT AM MAIN, SWIFT CODE: COBADEFFXXX» տվյալներով բանկային հաշվեհամարին՝ պատճառաբանելով, որ նախորդ հաշիվ-ապրանքագրում նշված տվյալներով բանկային հաշվեհամարը գտնվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության հարկային ծառայության խիստ ստուգման տակ և նրանք այն չեն կարող օգտագործել, ուստի տրամադրում են իրենց դուստր ընկերության բանկային հաշիվը:

2017թ. հուլիսի 20-ին «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով կատարվել է 17200,24 եվրո գումար փոխանցում «COMMERZBANK AG» շահառու բանկի DE43 5004 0000 0338 1050 00 հաշվեհամարին, իսկ որպես շահառու նշվել է «ACM BUSINESS AVIATION HANDLING GmbH», թեև երկրորդ հաշիվ-ապրանքագրում որպես

շահառու նշված է եղել իբրև թե «ACM BUSINESS AVIATION HANDLING GmbH» ընկերության դուստր ձեռնարկության անունը՝ «LODID GmbH»-ը:

2017թ. հունիսի 22-ին իրականացվել է Երևան - Բաղեն Բաղեն - Երևան հիշյալ չվերթը, սակայն 2017թ. օգոստոսի 8-ին Կարինե Սարգսյանին զանգահարել է «ACM Business Aviation Handling GmbH» ընկերության ներկայացուցիչը և հայտնել, որ նրանք իրականացված ծառայությունների դիմաց վճարվելիք 17200,24 եվրո գումարը դեռևս չեն ստացել:

Փոխադարձ ստուգումների և հաշիվների հստակեցման արդյունքում պարզվել է, որ «ACM Business Aviation Handling GmbH» ընկերությունը չի փոխել բանկային հաշվեհամարը և info@acmhandling-de.com էլեկտրոնային փոստարկղը նրանց չի պատկանում: Բացի այդ պարզվել է, որ նրանք ARY4001/4001 հատուկ չվերթի ժամի փոփոխության վերաբերյալ նամակը ստացել են «Ավիատուրիզմի Կենտրոն» ՓԲ ընկերության էլեկտրոնային փոստի նմանակ ops@air-ame.com էլեկտրոնային հասցեից, որը հայկական ընկերությանը նույնպես չի պատկանում: Պարզվել է նաև, որ փոխանցված գումարը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող «COMMERZBANK»-ում գործով չպարզված անձի կողմից կանխիկացվել և հափշտակվել է:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում 2017 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58160817 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար 2017 թվականի սեպտեմբերի 26-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և ընդունվել վարույթ:

19.06.2019թ.-ին ստացվել են սույն քրեական գործով Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասու մարմնին ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ ստացված նյութերը, որոնք գերմաներեն լեզվից հայերեն լեզվով թարգմանվելու նպատակով ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժին:

Նկատի ունենալով, որ «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության աշխատակից **Անահիտ Սարգսյանը** հանդիսանում է գերմաներեն լեզվի թարգմանության մասնագետ, ունի համապատասխան որակավորում և քրեական գործով շահագրգռված անձ չէ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

#### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 58160817 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության թարգմանիչ **Անահիտ Սարգսյանին**:

2. Թարգմանիչ **Անահիտ Սարգսյանին** պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականություններն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ ԱՎԱԳ ՔԼՆԻԳ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է «24»-ը հունիսի, 2019թ.: Նախագրուցացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ



Անահիտ Սարգսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**թարգմանիչ ճանաչելու մասին**

23.09.2019թ.

ք.Երևան

«Ճանաչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին գործուղված քննիչ Կ. Կ. Մոսինյանս, ուսումնասիրելով թիվ 15885419 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Չ Ե Ց Ի**

2019 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 17.30-ին, «Նոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Անուշավան Գառնիկի Սաֆարյանն այն մասին, որ 2019թ մայիսի 2-ին, Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 48-րդ հասցեում գործող «Ամերիա» բանկից Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ախեն քաղաքում բնակարան վարձելու համար 1200 ԱՄՆ դոլար գումար է ուղարկել ոմն Լաուրա Էսերին, սակայն վերջինս խարդախությամբ՝ խաբեության եղանակով տիրացել է այդ գումարին:

Դեպքի առթիվ 2019 թվականի հուլիսի 29-ին Նոստիկանության Կենտրոնական բաժնում «Ճանաչական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որը քննչական ենթակայության կարգով 2019 թվականի օգոստոսի 2-ին ուղարկվել է «Ճանաչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում Անուշավան Սաֆարյանը ճանաչվել է տուժող և ներկայացրել փաստաթղթեր գերմաներեն լեզվով:


Նշված փաստաթղթերը թարգմանելու համար անհրաժեշտ է Անահիտ Սուրենի Սարգսյանինային, որը տիրապետում է դերմաներեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզուներին ճանաչել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, ուստի ղեկավարվելով «Ճանաչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի և 83-րդ հոդվածի պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**


1. Վարույթի թիվ 15885419 քրեական գործով որպես թարգմանիչ ճանաչել Անահիտ Սուրենի Սարգսյանին, ով տիրապետում է գերմաներեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզուներին:

2. Թարգմանիչ Անահիտ Սարգսյանին պարզաբանել «Ճանաչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել «Ճանաչական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝  Կ. Կ. Մոսինյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է «Ճանաչական դատավարության օրենսգրքի հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար «Ճանաչական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Անահիտ Սուրենի Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**Թարգմանիչ ճանաչելու մասին**

11 սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Թ.Բ. Սարգսյանս, վերանայելով վարույթիս թիվ 15871418 քրեական գործի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ**

2018թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 03:00-ին, ոստիկանության ՊՊԾ գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտի ծառայողները Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի սկզբնամասից ոստիկանության ԵՔԲ Կենտրոնական բաժնի են հրավիրել Մուշեղ Կարապետի Ճիպինեանին, ով հաղորդում է տվել, որ նույն օրը՝ ժամը 01:00-ի սահմաններում, ոմն Արմինեն, հյուրընկալվելով իր կողմից վարձակալած Տիգրան Մեծ 31 շենքի 119 բնակարան հասցեում և օգտվելով իր քնած լինելու հանգամանքից, իր դրամապանակից գաղտնի հափշտակել է 700 ԱՄՆ դոլար գումար և փորձել է հափշտակել ընդհանուր 400 ԱՄՆ դոլար արժողությամբ իր ոսկյա մատանին և ժամացույցը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել հանցանքն ավարտին հասցնել:

Դեպքի առթիվ 02.10.2018թ. ոստիկանության Կենտրոնական բաժնում «Քրեական օրենսգրքի 34-177րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 15871418 քրեական գործը:

02.10.2018թ. թիվ 15871418 քրեական գործն ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի:

02.10.2018թ. թիվ 15871418 քրեական գործի նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում Մուշեղ Կարապետի Ճիպինեանը ճանաչվել է տուժող: Վերջինիս սակայն հնարավոր չի եղել քննության ընթացքում հայտնաբերել և հարցաքննել, քանի որ վերջինս բացակայել է «Ք»-ից:

Տուժող Մուշեղ Կարապետի Ճիպինեանին հարցաքննելու նպատակով քրեական գործով իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Լիբանանի Հանրապետություն:

Նախաքննության ընթացքում իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցման շրջանակներում առկա փաստաթղթերը արաբերենով թարգմանելու նպատակով ուղարկվել են «Ք» քննչական կոմիտե:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, և քրեական դատավարությունն էլ տարվում է հայերեն լեզվով, իսկ քրեական գործով Լիբանանի Հանրապետությանն ուղղված իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցման շրջանակներում առկա փաստաթղթերը անհրաժեշտ է թարգմանել արաբերենով, անհրաժեշտ է այդ նպատակով հրավիրել թարգմանիչ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ք» քր. դատ. օր. 15, 55, 83 հոդ.,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգման հրավիրելու մասին

<< 13 >> սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Վ. Տ. Սահակյանս, ուսումնասիրելով թիվ 58159917 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում Ռուբեն Հարությունի Խաչատրյանը հաղորդում է տվել այն մասին, որ անհայտ անձն անհայտ եղանակով 2017 թվականի հունիս ամսվա ընթացքում հասանելիություն ստանալով իր և <<Բիդեք>> ՍՊ ընկերության էլեկտրոնային փոստերի բովանդակությանը, ստեղծել է իր էլեկտրոնային փոստի նմանակ էլեկտրոնային հասցե և միջամտելով իրենց միջև իրականացվող գործարար նամակագրությանն, իր անունից <<Բիդեք>> ՍՊ ընկերությանը ներկայացրել է բանկային այլ հաշվեհամար, ինչից հետո հափշտակել է վերջիններիս կողմից փոխանցված 12.876.060 ՀՀ դրամին համարժեք 26.800 ԱՄՆ դոլար գումարը:

Դեպքի առթիվ 2017 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58159917 քրեական գործը:

2017 թվականի օգոստոսի 30-ից թիվ 58159917 քրեական գործի նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել քրեական գործով Հունգարիայի իրավասու մարմիններից ստացված նյութերը հունգարերենից թարգմանել հայերեն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 58159917 քրեական գործով որպես թարգման ներգրավել <<Պոլիգլոտներ>> ՍՊ ընկերության թարգմանիչ Ռաիսա Հովհաննիսյանին:

2. Ռ. Հովհաննիսյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննության գլխավոր

վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝

Վ. Տ. Սահակյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ռ. Հովհաննիսյան

<< 11 >> 11 2019թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թարգմանիչ ներգրավելու մասին


<< 13 >> սեպտեմբերի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ. Տ. Սահակյանս, թիվ 58159917 քրեական գործով, մասնակցությամբ Ռախսա Հովհաննիսյանի կազմեցի սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի կարգով 2019թ. սեպտեմբերի 13-ի թարգման հրավիրելու մասին որոշման հիման վրա Ռախսա Հովհաննիսյանը ներգրավեց որպես թարգմանիչ, նրան պարզաբանվեցին որպես թարգմանիչ իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացվեց ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Արձանագրությունն ընթերցվեց բարձրաձայն, մասնակցի կողմից դիտողություններ և լրացումներ չեղան, գրված է ճիշտ:

Թարգմանիչ՝ \_\_\_\_\_  Ռ. Հովհաննիսյան

ՀԿԳ ավագ քննիչ՝ \_\_\_\_\_  Վ. Տ. Սահակյան